Սիրելի՛ բարեկամ,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, որպես կրթության ու գիտության ինտեգրման գերակա սկզբունքով առաջնորդվող բարձրագույն ուսումնական միավոր, հենց այդ համատեքստում շարունակում է իր ռազմավարական ծրագրերը կյանքի կոչելու կարևոր առաքելությունը, որի հավաստումն է նաև «Տնտեսություն և հասարակություն» անվանմամբ հայալեզու գիտական հանդեսի անդրանիկ համարի հրապարակումը:

Ինքնին հասկանալի է, որ միջազգային չափանիշներին համապատասխանող և անգլերեն հրապարակվող «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի կողքին համալսարանը չէր կարող չնախատեսել հայալեզու մասնագիտական ամսագրի թողարկումը, որում հրապարակվող հոդվածների համար նույնպես սահմանվել է միջազգային մասնագիտական ամսագրերին համապատասխանող չափորոշիչների ամենաբարձր նշաձողը:

Գիտական հանդեսի խմբագրական խորհրդում ընդգրկված են Հայաստանի և արտերկրի տնտեսագիտական հանրույթը ներկայացնող հեղինակավոր գիտնականներ: Իր բնույթով այս ամսագիրը ժառանգորդն է ՀՊՏՀ-ի կողմից հրապարակվող հայալեզու «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի և սկզբունքորեն պահպանել է նախորդի կառուցվածքային տրամաբանությունն ու մասնագիտական խորագրերը:

Ամսագրի թեմատիկ շրջանակն ընդգրկուն է և ներառելու է տեսականից մինչև գործնական կիրառելիության, մակրո- և միկրոտնտեսագիտական, միջազգայինից մինչև ներքին շուկաներին առնչվող, սոցիալական, քաղաքագիտական, պատմագիտական, փիլիսոփայական և այլ ուղղություններով գիտական վերլուծական ու հետազոտական որակյալ աշխատանքներ:

Լիահույս եմ, որ «Տնտեսություն և հասարակություն» գիտական հանդեսը կունենա իր ուրույն տեղը գիտական ամսագրերի հարթակում:

Բարի երթ:

Լավագույն բարեմաղթանքներով՝
«Տնտեսություն և հասարակություն» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ